

2492

Ս. ԿԱՐԱԳՅՈՂՅԱՆ



ԲԱՄԲԱԿԵՆՈՒ
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

19008

633
4-29

21 MAY 2013
633

4-29

18394

04 AUG 2010

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարի Խ. Հայաստանում մշակվելու յե 18 հազար հեկտար բամբակ: Այդ տարածությունից բարձր բերք ստանալու համար անհրաժեշտ է աշխատանքները կազմակերպել ճիշտ և բոլոր անհրաժեշտ ագրոձեռնարկումները կիրառել ժամանակին ու բարձր վորակով:

Այժմ խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները սոցիալիստական դաշտերից բարձր բերք ստանալու համար ունեն բոլոր հնարավորությունները: Անցյալ տարի նրանցից մեծ մասն այդ ապացուցեց, ստանալով նախատեսվածից ավելի բարձր բերք: Մակայն դեռ ևս մեր դաշտերի բերքատվությունը շատ ցածր է, այնինչ, մենք՝ ոգտագործելով սոցիալիստական տնտեսությունների լայն առավելությունները և դեկալարվելով կուսակցության 17-րդ համագումարում ընկ. Ստալինի տված ցուցմունքներով, կարող ենք մեր դաշտերի բերքատվությունը հասցնել առավելագույն չափերի:

Բամբակի դաշտերից բարձր բերք ստանալու նպատակով, անհրաժեշտ է բամբակենու զարգացման համար ստեղծել բարենպաստ պայմաններ: Ինչպես բոլոր բույսերի, այնպես էլ բամբակենու զարգացման համար, պահանջվում է՝ ող, ջուր, սննդանյութեր, ֆերմոթյուն և լույս: Բույսերն այս գործոններով ապահովվում են մի շարք ագրոձեռնարկումներով, վորոնց ճիշտ և ժամանակին կիրառումը բերքի բարձրացման խնդրում անհրաժեշտ պայման է:

Յերբեք լավ բերք չի կարելի սպասել, յեթե բույսերի զարգացման համար պահանջվող ագրոձեռնարկումներից մի մասն ուշքաթող արվի: Այսպես, որինակ՝ տնխնամ և անժամանակ կատարված ցանքից, վորքան էլ հետագա աշխատանքները խնամքով կատարվեն, միևնույնն է, չի ստացվի այն արդյունքը, վորը հնարավոր էր ստանալ բոլոր պայմանները ճիշտ կատարելու դեպքում:



38008.12

քում: Կամ, չնայած պարարտացումը բարձր բերք ստանալու կարևոր պայմաններից մեկն է, բայց պարարտացված դաշտերից չի կարելի բարձր բերք սպասել, յեթե մոլախոտերի դեմ համապատասխան պայքար չի տարվում, քանի վոր պարարտացված հողերում մոլախոտերն ավելի ուժեղ դարգանալով, ավելի մեծ էլ ֆիտոն են հասցնում: Այս իսկ տեսակետից, անհրաժեշտ է պահանջվող բոլոր պայմանների վրա հարկ չեղած ուշադրությունը դարձնել և բոլոր աշխատանքները կատարել ժամանակին ու բարձր վորակով:

† ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ո. Հայաստանի պայմաններում բամբակենին կարող է աճել բոլոր տեսակի ջրովի հողերում, բացի չորաքայթ, ճահճոտ և մոլախոտերով խիստ վարակված հողերից:

Ի հարկե, սա չի նշանակում, վոր բոլոր հողերում էլ բամբակենին հաճախ չափով լավ բերք կտա: Ինչպես բոլոր բույսերը, այնպես էլ բամբակենին լավ է զարգանում պարարտ, թեթև հողերում: Սակայն ծանր-կավային հողերում էլ կարելի չի բամբակենուց լավ բերք ստանալ, յեթե այդ հողերը ցանքի համար լավ են նախապատրաստվում և հետագայում կանոնավոր միջնաբային մշակութուն է տարվում: Բացի այս, բամբակենու համար վոչ պիտանի հողերը, ինչպես, որինակ՝ մոլախոտերով խիստ վարակված, ուժեղ փոշիացած, ուժասպառ չեղած հողերը կարելի չի ցանալ: Բայց ջանասիրտությամբ միջոցով բամբակենու մշակութուն համար պիտանի դարձնել:

ՀՈՂԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ

Բամբակենին պահանջում է խնամքով մշակված, փուխր և մոլախոտերից մաքրված դաշտեր: Այդպիսի դաշտերում բամբակի լավ զարգանալու համար պահանջվող պայմաններն ավելի բարձր վիճակում են գտնվում: Նման պայմաններ ստեղծելու համար, մինչև ցանքը կատարվող աշխատանքները չափազանց կարևոր նշանակություն ունեն: Ցանքի համար հողը վորքան լավ և ժամանակին նախապատրաստվի, չայնքան հետագա աշխատանքները կհեշտանան և ժամանակին կկատարվեն:

Բամբակենու համար տրամադրված դաշտի նախապատրաստ-

առական աշխատանքների շարքում, աշխատանքները հիմնական տեղ է դրավում: Աշխանից վարված հողերում ավելի լավ են կուտակվում մթնոլորտային տեղումներից ստացված ջրերը: Այս վարի միջոցով վոչնչացվում է մոլախոտերի զգալի մասը, վորոնց ստորերկրյա մասերը, խոր վարի միջոցով, ջրվում են հողի յերեսը և յենթավրկվելով ցրտերի ազդեցության, մահանում են: Աշխանից վարված հողերում դարնան աշխատանքներն ավելի հեշտ և բարձր վորակով են կատարվում, մանավանդ ծանր-կավային հողերը շատ ավելի անհրաժեշտ է աշխանից վարել, վորպեսզի այդ հողերում, վարի ժամանակ առաջացած մեծ կոշտերը՝ խոնավության և ցրտի ազդեցության տակ, փխրանան ու հետագայում հեշտությամբ մշակվեն: Այլապես, այդպիսի հողերի վարը դարնանից կատարելու դեպքում, կոշտերը շատ դժվարությամբ են մանրացվում և ցանքի հետագա աշխատանքները խիստ դժվարանում են: Բացի այս, աշխատավարը նպաստում է ֆիտոստոնների վոչնչացման, ցրտի ազդեցության տակ հողի ստրուկտուրայի լավացման և թեթևացում է դարնան աշխատանքները: Աշխատավարի արդյունքն ավելի մեծ է լինում, յեթե մինչև հիմնական վարն այդ դաշտում մշակված բույսը հնձելուց անմիջապես հետո (զլխավորապես հացահատիկները), կատարվում է թեթև վար, կամ ինչպես ընդունված է ստել—լուգանալ: Այս աշխատանքը շատ կարևոր է և անհրաժեշտ է նրա վրա լուրջ ուշադրություն դարձնել: Նախ, վոր այս աշխատանքի միջոցով դաշտում տարածված մոլախոտերի մեծ մասը վոչնչացվում է, վորոնք, բերքը հավաքելուց հետո ազատ զարգանալով, ընդունակ են մեծ քանակությամբ սերմ տալ: Յերկրորդ, խոզանավարի միջոցով հողի յերեսը փխրեցվում, խախտվում են մագնական անոթները, վորի շնորհիվ այդ դաշտի խոնավությունն ավելի դանդաղ է գոլորշիանում: Յերրորդ, նման պայմաններում բույսերի մնացորդներն ավելի լավ են քայքայվում, հոգմահարման պրոցեսներն արագ են կատարվում և այդ բոլորի շնորհիվ, հողի բերրիությունն ավելի արագ է վերականգնվում, ինչպես նաև հողը նոր հնձված դաշտից հետո հեշտ է վարվում և մեծ կոշտեր չեն ստացվում: Այս իսկ տեսակետից, յեթե տվյալ դաշտի բերքահավաքից հետո մինչև աշխատավարը բավական ժամանակ է մնում, ապա անհրաժեշտ է այդ դաշտում բերքահավաքից անմիջապես հետո թեթև վար կատարել, վորից հետո աշխանը

կատարել հիմնական վարը: Աշնանավարը մինչև գարուն չպետք է փոցխել, վորպեսզի վարի հետևանքով դաշտի վրա առաջացած խորդուբորդություններն արգելք հանդիսանան արտի վրայից ջրի հոսելուն, և լավ ներծծվեն հողի մեջ:

Գարնանը, աշնանից վարված հողերն անհրաժեշտ է առանց ուշացնելու փոցխել, վորպեսզի հողից ջրի գոլորշիացումն ուժեղ չկատարվի և դաշտում նոր ծլած մոլախոտերը վոչնչանան:

Աշնանից չվարված հողերը պետք է գարնանը, վորքան հնարավոր է, շուտ վարել, վոր հողը նստի և հետագա աշխատանքները հնարավոր լինի իր ժամանակին կատարել: Սակայն պիտի նկատի ունենալ, վոր ժամանակից շուտ կատարված վարն ունի իր խիստ բացասական կողմերը: Ընդհանրապես վարի վորակը մեծ չափով կախված է վարելու ժամանակից: Շատ շուտ վարված հողը, շատ խոնավ լինելու հետևանքով, սվողվում է և ստացվում է «ցեխավար»: Նման վարից ստացվում են մեծ կոշտեր, վորոնք չորանալով, շատ դժվար են փշրվում և հողն ուժեղ փռխանում է: Ժամանակից ուշ վարված հողերը ևս տալիս են մեծ կոշտեր և փռի, ինչպես նաև ուշացնում են ցանքի աշխատանքները: Այսպես, թե այնպես, անժամանակ կատարված վարը թե հողի վորակն է վատացնում և թե շատ դժվարացնում է հետագա աշխատանքները: Վարը հաջող է ստացվում, յերբ այդ հողի խոնավութունը հավասար է նրա լրիվ ջրունակության 60—70% -ին: Դործնականում, յերբ հողի յերեսը վորոշ չափով չորացել է, կամ, ինչպես ասում են, «քեղը» յեկել է, պետք է անմիջապես վարել: Վարը պիտի կատարել խոնավքով, հավասար խորությամբ, չպետք է թողնել չվարված մասեր և անկյուններ: Գարնան վարից անմիջապես հետո հողը պետք է փոցխել: Տրակտորով վարի ժամանակ կարելի չէ գուլթանի հետևից կցել փոցխի, վորի միջոցով թե աշխատանքի արտադրողականությունն է մեծանում և թե կոշտերը հեշտ են փշրվում ու ջրի ավելորդ գոլորշիացման առաջն առնվում:

Վարի աշխատանքից հետո, անուայման անհրաժեշտ է հավաքել դանդուբդանի, չայրի և այլ մոլախոտերի կոճղարմատները և այրել:

ՎԱՐԻ ԽՈՐՈԹՅՈՒՆԸ

Բամբակենու դաշտերի բերքատվությունը բարձրացնելու խնդրում մեծ նշանակութուն ունի խոր վարը: Խոր վարի միջոցով, դաշտում տարածված մոլախոտերի զգալի մասը վոչնչացվում է, խորը վարված դաշտում ավելի մեծ քանակությամբ ջուր և կուտակվում, ինչպես նաև ողն ավելի առատորեն է մուտք գործում և բույսերի համար մատչելի նյութերի կուտակումն արագ է կատարվում: Բամբակենու համար՝ դաշտերը պետք է վարել վոչ պակաս քան 18—20 սմ., ըստ վորում, ծանր-կավային և մոլախոտերով խիստ վարակված հողերը պետք է վարել 20 սանտիմետրից վոչ պակաս խորությամբ, իսկ թեթև-ավազախոտ և մոլախոտերից մաքուր հողերում՝ 18—20 սմ.: Այն հողերը, վորոնց վարելաշերտը փոքր է, պետք է համեմատաբար քիչ խորությամբ վարել, բայց ամեն տարի հետզհետե վարը խորացնել:

Ա Ր Ա Յ

Բամբակենի ցանելուց առաջ հողը ջրելը, կամ ինչպես քնդունված է ասել, արաթ անելն ունի մի շարք առավելություններ: Արաթը կատարվում է աշնանից կամ գարնանից: Այս միջոցով, ի զուր հոսող ջրերը կուտակվում են արտերի մեջ, վորի շնորհիվ հետագայում ջրի կարիքը խիստ չի զգացվում: Խնամքով արաթ արված հողերում, ցանքից հետո, ծլաջուր տալու կարիք չի լինում, իսկ այդ, բացի ջուրը խնայելուց, ունի նաև այն առավելությունը, վոր նախ, ցանքից հետո հողի յերեսը չի կեղևակալում և յերկրորդ, աշխատանքի յիռուն ժամանակ, բանվորական ձեռքերի խնայողություն է կատարվում: Բացի այդ, արաթը վորոշ չափով նպաստում է դաշտերում տարածված մոլախոտերի վոչնչացման:

Սակայն պիտի նկատի ունենալ, վոր մեր բամբակացան շրջանների կլիման ամառը չոր և տաք լինելու հետևանքով, արտերը շատ շուտ չորանում են և այդ պատճառով արաթն իր նշանակութունը կարող է կորցնել, յեթե այն չի կատարված հատուկ խնամքով, ինչպես նաև, յեթե հետագա աշխատանքները ժամանակին չեն կատարված:

Արաթ պիտի կատարել խոնավունակ հողերում, իսկ թե-

թեւաժողային հողերը, վորոնք իրենց մէջ ջուր լալ չեն պահում, միտք չունի արաթ կատարել:

Աճեալն աւտար կարելի չի կատարել մինչև հողերի սառչելը, դրանից հետո միտք չունի արաթ կատարել, քանի վոր սառած հողերը ջուր չեն ձծում: Արաթի համար հողը պետք է վարել խոր (20 սմ.) և ջուրը, վարից առաջացած աղեսների միջով, պետք է դանդաղ հոսանքով բաց թողնել: Զրի դանդաղ բաց թողնելը շատ կարևոր է, վորովհետև միայն այդ ձևով է, վոր այն լալ է ձծվում հողի մէջ, իսկ արագ հոսանքի դեպքում, հողի յերեսը ավաղվում է և ջուրը գծվարութեամբ է ներծծվում: Արաթ անելիս, ջուրը պետք է այնքան բաց թողնել, վոր այն չծածկի ամբողջ դաշտը, այլ հոսի աղեսների միջով: Այս ձևով ջրելիս, թմբերը ջրով կը հաղենան ներքևից մազանոթներով բարձրացող ջրով: Վերոհիշյալ ձևով և խնամքով արաթ կատարված արտերի մէջ մեծ քանակութեամբ ջուր կկուտակվի և հետագայում թմբերը յինթարկվելով ցրտի, քամիների ու ջերմութեան ազդեցութեան, կխլարանան ու կթափվեն աղեսների մէջ, վորի շնորհիվ դաշտի յերեսը կունենա բազմապիսի փուխր վիճակ:

Աշնանն արաթ արված հողը, գարնան առաջին իսկ հնարավորութեան դեպքում, պետք է փոցխել կամ կրկնավար կատարել և հետո փոցխել, վորպեսզի հողի յերեսին առաջացած կեղևը փշրվի, խախտվի մազանոթների ցանցը և դրանով ջրի արագ գոլորշիացմանը խոչնդոտ հանդիսացվի: Այդ միջոցով նաև վոչնչացվում են գարնանը դաշտում առատորեն ձլած մոլախոտերը: Սակայն կրկնավար կարելի չի կատարել այն դեպքում, յերբ դրանից հետո շուտով ցանքս է կատարվելու: այլապես, կրկնավարի միջոցով հողի վերին շերտը կչորանա և ցանքից հետո կարիք կլինի ձլաջուր տալ. մի բան, վորն արաթի հիմնական նշանակութեամբ կկորցնի:

Ղանդուրդանի և այլ կոճղարմատավոր մոլախոտերի դեմ պայքարելու նպատակով, աշնան արաթը պիտի կատարել այլ ձևով: Այս դեպքում արաթը դաշտերը լճացնելու բնույթ պետք է կրի: Այսինքն, նման մոլախոտերով խիստ վարակված հողերը խոր վարելուց հետո, պետք է ջուրը բաց թողնել այնպես, վոր ծածկի ամբողջ դաշտը և յերկար ժամանակ հոսի: Այս ձևով, յերբ

ջուրը յերկար ժամանակ ծածկում է դաշտի յերեսը, հողի մէջ գտնվող կոճղարմատները, զրկվելով ոդից, վոչնչանում են:

Գարնան աւտար պետք է, վորքան հնարավոր է, շուտ կատարել, վորպեսզի հողի նախապատրաստական աշխատանքներն իր ժամանակին կատարվեն և ցանքը չուշանա: Այս արաթը նույնպես պիտի կատարել հողը խոր վարելուց հետո և ինչպես նաև աշնան արաթի դեպքում, պիտի նկատի ունենալ հողի վորակը և ուելքը:

Ջուրը պետք է բաց թողնել աղեսների միջով և դանդաղ: Արաթից հետո, առաջին իսկ հնարավորութեան դեպքում (քեռիս ժամանակ), հողն անպայման առանց ուշացնելու պետք է փոցխել: Ծանր, մոլախոտերով վարակված, ինչպես նաև կոշտ հողերը պետք է, յերեսանց կրկնավար կատարել և հետո, անմիջապես փոցխել:

ԲԱՍԲԱԿԻ ՑԱՆԲԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական դաշտերի բերքատվութեամբ բարձրացնելու խնդրում, ցանքաշրջանառութեամբ հանդիսանում է մի հզոր գործոն: Ցանքաշրջանառութեամբ լայն հնարավորութեաններ և տալիս ազդեցություններ կունենան վոյժ սիստեմը լիովին կիրառելու և դրանով իսկ ապահովելու պլանային առաջադրանքները:

Կոլտնտեսութեան ցանքաշրջանառութեամբ կազմելիս, պիտի հիմք ընդունել պետական առաջադրանքները և ըստ այնմ վորոշել դաշտերի թիվը, կուլտուրաների հարաբերութեամբ, նրանց հերթականութեամբ և բոլոր ազդեցությունների ոգտագործումը:

Նման սկզբունքով բույսերի նպատակահարմար հաջորդականութեամբ բամբակենու բերքատվութեան բարձրացման խնդրում, ունի հսկայական առավելութեաններ:

Այդ միջոցով աշխատանքները տարվում են ծրագրված ձևով, բարձրացվում է բանվորական և քաշող ուժի արտադրողականութեամբ, կանոնավոր պայքար է մղվում մոլախոտերի և ֆսաստուկների դեմ, նպատակահարմար կերպով են ոգտագործվում հոշուժ գտնվող աննդանույթերը, ինչպես նաև ջուրը, խախտում են հողի ֆիզիկական հատկութեանները և ձեռք են բերվում մի շարք այլ առավելութեաններ:

10. Հայաստանի բամբակացան շրջանների համար ընդունված են հետևյալ ցանքաշրջանառությունները:

1. բամբակ, 2. բամբակ, 3. բամբակ, 4. բամբակ, 5. գարնանացան, 6. աշնանացան հացահատիկ՝ մեջն առվույտ, 7. առվույտ, 8. առվույտ:

Այս 8-դաշտյա ցանքաշրջանառությունն առաջադրվում է այն բամբակացան կոլտնտեսություններին, վորոնք ապահովված են ջրով և ունեն բավականին լավ վորակի հողեր և համապատասխան քանակի բանվորական ձեռքեր:

Այս ցանքաշրջանառությունն ըստ տարիների հետևյալ պատկերն է տալիս:

Տարիներ	1-ին	2	3	4	5	6	7	8
Գաշտեր								
1-ին	Բամբ.	Բամբ.	Բամբ.	Բամբ.	Գարն.	Աշնան + առվ.	Առվ.	Առվ.
2-րդ	Բամբ.	Բամբ.	Բամբ.	Գարն.	Աշն. + առվ.	Առվ.	Առվ.	Բամբակ
3-րդ	Բամբ.	Բամբ.	Գարն.	Աշն. + առվ.	Առվ.	Առվ.	Բամբակ	Բամբակ
4-րդ	Բամբ.	Գարն.	Աշն. + առվ.	Առվ.	Առվ.	Բամբակ	Բամբակ	Բամբակ
5-րդ	Գարն.	Աշն. + առվ.	Առվ.	Առվ.	Բամբ.	Բամբակ	Բամբակ	Բամբակ
6-րդ	Աշն. + առվ.	Առվ.	Առվ.	Բամբ.	Բամբ.	Բամբակ	Բամբակ	Գարն.
7-րդ	Առվ.	Առվ.	Բամբ.	Բամբ.	Բամբ.	Բամբակ	Գարն.	Աշն. + առվ.
8-րդ	Առվ.	Բամբ.	Բամբ.	Բամբ.	Բամբ.	Գարն.	Աշն. + առվ.	Առվ.

Առաջին տարին՝ 7-րդ և 8-րդ դաշտերը, ինչպես նաև յերկրորդ տարին՝ 7-րդ դաշտն առվույտ չի ցանվում (առվույտը ցանվում

է ամեն տարի՝ միայն աշնանացանի մեջ), այլ, յեթե տնտեսությունն մեջ չկան համապատասխան առվույտի դաշտեր, վոր մըտցվեն ցանքաշրջանառության մեջ, ապա այդ դաշտերը ժամանակավորապես ցանվում են մի վորևե նպատակահարմար կուլտուրայով, մինչև վոր յերրորդ տարին ցանքաշրջանառությունը կըստանա իր իսկական պատկերը:

2) 1. բամբակ, 2. բամբակ, 3. գարնանացան, 4. աշնանացան 5. աշնանացան + առվույտ, 6. առվույտ, 7. առվույտ, 8. առվույտ:

Այս ցանքաշրջանառությունն առաջադրվում է այն կոլտնտեսություններին, վորոնք ապահովված չեն ամառվա ջրով, հողերն անվորակ, ուժասպառ են և ծանրաբեռնված են գյուղատնտեսական այլ ճյուղերով (այգեգործություն): Իսկ ավելի քիչ ջուր ունեցող կոլտնտեսությունների համար առաջադրվում է՝ 1. բամբակ, 2. բամբակ, 3. գարնանացան, 4. աշնանացան, 5. աշնանացան, 6. աշնանացան + առվույտ, 7. առվույտ, 8. առվույտ:

3) Յերկրորդ կետում հիշված պայմանների միջին տեղը բռնող կոլտնտեսությունների համար առաջադրվում է՝ 1. բամբակ, 2. բամբակ, 3. բամբակ, 4. գարնանացան, 5. աշնանացան, 6. աշնանացան + առվույտ, 7. առվույտ, 8. առվույտ:

4) 1. բամբակ, 2. բամբակ, 3. գարնանացան, 4. աշնանացան, 5. աշնանացան, 6. միաժյա ընդեղեն:

Սա կազմված է այն կոլտնտեսությունների համար, վորոնց դաշտերը շատ քիչ են ապահովված ջրով (վեղու շրջան): Այս—առանց առվույտի ցանքաշրջանառությունը ժամանակավոր բնույթ է կրում, վորը կոգտագործվի մինչև հիշյալ տնտեսությունները ջրով ապահովելը:

Այսպիսով, հիշյալ ցանքաշրջանառություններն առաջադրվում են համապատասխան կոլտնտեսությունների, յեղնելով պետական առաջադրանքից, հողային պայմաններից, ջրով ապահովվածությունից, բանվորական ձեռքերի քանակից և այլն: Ի հարկե, այդ ցանքաշրջանառություններն անփոփոխելի չեն, այլ՝ յեղնելով տվյալ կոլտնտեսության կոնկրետ պայմաններից, կարելի է նրանց մեջ մտցնել վորոշ փոփոխություններ:

Ցանքաշրջանառության առաջին տարին դաշտերի՝ բաշխու-

մը կատարելիս, պետք է մոխրոտերից մաքուր, բարձր վորակի, բերրի հողերը տրամադրել բամբակենու, իսկ հետագայում պահպանել կուլտուրաների հաջորդականությունը:

ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԵՐԻ ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄԸ

Ամեն մի բույս, այդ թվում նաև բամբակենին, իր անհրաժեշտ սննդանյութերի մեծ մասը վերցնում է հողից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր մեկ հեկտար տարածությունից՝ միջին բերքի պայմաններում (մոտ 8 ցենտներ բերքի դեպքում), բամբակենին վերցնում է մոտավորապես 60 կիլոգրամ ազոտ, 25—30 կլգր. ֆոսֆոր և 35—45 կլգր. կալիում և մի շարք այլ նյութեր, վորոնց բամբակենին վերցնում է համեմատաբար ավելի քիչ քանակությամբ և մեր հողերում նրանցից այնքան կան, վոր այդ նյութերով հողերը պարարտացնելու կարիքը չի զգացվում: Նույնը պիտի ասել առաջիկ նաև կալիումի նկատմամբ, վոր մեր բամբակացան շրջանների հողերից մեծ մասն այդ նյութով բավականին հարուստ են: Իսկ ինչ վերաբերում է ազոտին և ֆոսֆորին, փորձերը ցույց են տալիս, վոր նրանցով հողերի պարարտացումը բամբակենու բերքատվությունը մեծ առկոսներով բարձրացնում է: Այսպես, որինսկ 10. Հայաստանի Պարարտացման Դիտահետազոտական Ինստիտուտի պրոֆ. Պ. Վալանթրյանի ղեկավարությամբ կատարված հետազոտությունները պարզել են, վոր մյուս անհրաժեշտ ազոտահունարկումները կիրառելու պայմաններում, պարարտացումից բամբակի բերքատվությունը բարձրանում է միջին հաշվով 35 տոկոս, վորը յերևում է հետևյալ տախտակից:

Բամբակի բերքի հավելումը՝ ազոտով յնվ ֆոսֆորով պարարտացնելու հետևանքով

Շ Ր Զ Ա Ն Ն Ե Ր	Ազոտ	Ֆոսֆոր	Ազոտ և ֆոսֆոր
Նամարվի շրջան	3 0/0	4 0/0	16 0/0
Ղուբոզդուղու շրջան	24 »	15 »	38 »
Ջանդիբասարի շրջան	32 »	13 »	32 »
Հրազդանի շրջան	30 »	16 »	37 »
Վաղարշապատի շրջան	4 »	15 »	31 »

Բամբակի դաշտերը կարելի է պարարտացնել թե՛ աշնանից և թե՛ գարնանից, սակայն փորձերը ցույց են տալիս, վոր աշնանից պարարտացված հողն ավելի մեծ արդյունք է տալիս:

Դաշտերն ինչպես աշնանը, այնպես ել դարնանը, հանքային նյութերով պետք է պարարտացնել վարից առաջ և հետո վարել:

Աշնանից վարված հողերը գարնանը պարարտացնելիս, պարարտանյութերը պիտի տալ կրկնավարից առաջ կամ կրկնավար չը կատարելու դեպքում, նյութերը շաղ տալ և 2 անգամ լավ փոշուել: Արաթ արված հողերում պարարտացումը կատարել ջրելուց առաջ:

Պարարտանյութերը դաշտում պետք է շաղ տալ հավասարաչափ: Այս աշխատանքը լավ է կատարել մեքենաներով, վորոնք ավելի լավ արդյունք են տալիս, քան ձեռքի աշխատանքը: Նախքան պարարտանյութերը շաղ տալը, պետք է նրանք լավ մանրացնել և խառնել հողի հետ մեկին-մեկ, կամ մեկին յերկու հարանդակությամբ:

Պարարտացում պիտի կատարել նախ ուժասպառ հողերում և հատուկ ուշադրություն պետք է դարձնել, վոր այդ դաշտերը մաքրված լինեն մոխրոտերից, ինչպես նաև հետագայում անհրաժեշտ աշխատանքները պետք է կատարել ժամանակին և խնամքով, այլապես պարարտացումից վոչ մի ոգուտ չի ստացվի:

ՑԱՆՔ ՅԵՎ ԽՆԱՄՔ

ԲԱՄԲԱԿԻ ՍԵՐՄԱՑՈՒՆ

Բամբակի դաշտերից բարձր բերք ստանալու համար, բացի դաշտերը լավ մշակելուց, պարարտացնելուց և այլ աշխատանքներից, անհրաժեշտ է նաև ցանել լավ վորակի սերմեր:

Սերմացուն պետք է լինի հասունացած և ունենա բարձր ծլունակություն (վոչ պակաս 85% -ից): Սովորաբար առաջին և յերկրորդ չանաքից ստացված բամբակը տալիս է բարձր վորակի և ծլունակությամբ սերմեր. իսկ ցրտահարությունից հետո հավաքված բամբակի սերմերը թե՛ վորակով և թե՛ ծլունակությամբ ցածր են լինում: Հասունացած և լավ վորակի սերմերը լինում են ծանր, տուռը և տվյալ սորտին հատուկ բնական գույնով, իսկ չհասունացած սերմերը լինում են թեթև, չմշկված, և անբնական գույնով:

Ծանօթից առաջ սերմացուն պետք է գտել հիշյալ վատ վորակի սերմերից և այլ նյութերից: Պետք է ցանել լինտիրովկայի յենթաբիված սերմեր, վորոնց ծլման եներգիան ավելի մեծ է լինում:

Բացի հիշյալներից, մեծ նշանակություն ունի նաև տեսակավոր սերմերի ոգտագործման խնդիրը: Ինչպես հայտնի յե, կան բամբակենու բազմաթիվ սորտեր, վորոնք հասունացման շրջանով, բերքի քանակով, վորակով և այլ հատկություններով իրարից տարբերվում են: Այս իսկ տեսակներից պարզ է, վոր չի կարելի պատահական սորտերի սերմեր ցանել, այլ պետք է ոգտագործել տվյալ կլիմայական և հողային պայմաններին համապատասխանող սորտեր: Ինչպես նաև չի կարելի մշակել բամբակենու տարբեր սորտերի խառնուրդը. նման սերմացույից յերբիք հավասարաչափ զարգացող բամբակի բույսեր չեն ստացվի, վորի հետևանքով բերքը թե վորակով և թե քանակով շատ ցածր կլինի: Բացի դրանից, տեսակավոր սերմերը միշտ ել ավելի լավ արդյունք են տալիս, շնորհիվ նրան, վոր այդ սերմերը ձեռք են բերվում հատուկ ձևերով մշակված և բարձր վերակ ունեցող բամբակենիների սերմերից: Մեզ մոտ այժմ մշակվելու յեն № 915, 96 և այլ տեսակավոր սորտերը, վորոնց վրա հատուկ ուշադրություն պետք է դարձնել, վորպեսզի նրանք չխառնվեն այլ սորտերի հետ:

Հաճախ, ցանքից մեկ-յերկու որ առաջ, սերմացուն ջրի մեջ է դրվում, վորի նպատակն է սերմերի ծելն արագացնել: Փորձերը ցույց են տալիս, վոր այս միջոցով սերմերի ծելը կարելի յե մոտ 1—2 որով արագացնել, վորն անկասկած ունի դրական նշանակություն:

Սերմերը պիտի թրջել արաթ արված հողերում ցանելիս, իսկ սովորական «սապսուվար»-ի համար այդ աշխատանքն ավելի պակաս նշանակություն ունի, ժանալանդ ծլաշուրն ուշացնելու դեպքում, թրջված սերմերը չոր հողում կարող են ուժեղ վնասվել:

Սերմերը հոսող ջրի մեջ պիտի պահել 1—2 որ: Հատուկ ուշադրություն պիտի դարձնել, վոր սերմերը չծլն, այլպես շարժացանով ցանքի ժամանակ ծիւրերը կվնասվեն: Ծիւր տված սերմացուն չպետք է ցանել:

ՑԱՆԲԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Բամբակենու լավ զարգացման համար, ցանքի ժամանակն ունի մեծ նշանակություն: Ինչպես ուշ, այնպես ել ժամանակից շուտ կատարված ցանքերն ունեն մի շարք բացասական հետևանքներ:

Շատ վաղ ցանված բամբակենու սերմերը՝ անհրաժեշտ քանակի ջերմություն չլինելու պատճառով, չեն ծլում, վորի հետևանքով հողի մեջ սերմերը՝ խոնավ պայմաններում յերկար ժամանակ մնալով, փչանում են, ծլածներն ել չափազանց նվազ, դեղնած են լինում: Բացի այդ, նման ցանքերը հաճախ յենթաբիվելով վաղ վարնան ցրտահարությունների, խիստ վնասվում են: Ուշ կատարված ցանքը ես ունի վոչ պակաս բացասական կոդմեր: Այդպիսի ցանքերից շատ քիչ բերք է ստացվում շնորհիվ նրան, վոր բամբակենու կնգուղների մեծ մասը, մինչև ցրտերի գալը, չեն հասունանում, ինչպես նաև բերքի մեծ մասը հավաքվում է ցրտահարություններից հետո, վորի հետեանքով բերքի վորակը ես ցածր է լինում:

Այս խնդիրները պարզ յերևում են ստորև բերված փորձից, վորը կատարված է Գանձակի փորձադաշտում:

Բամբակի սորտը	Ցարերի ժամկետներում կատարված ցանքի բերքը, մեկ հեկտարից ցնաններն.						
	15-IV	25-IV	5-V	15-V	25-V	5-VI	15-VI
Կինդ (1138 գիծ)	21,7	23,3	27,0	26,3	18,1	17,9	16,3
169	30,4	30,2	31,2	28,3	23,3	18,6	15,6
Նավրոցկի	30,6	28,7	28,1	25,5	16,8	13,8	12,7

Նման բազմաթիվ փորձերով կարելի յե համոզվել, վոր միշտ ել, ուշ կատարված ցանքից շատ ավելի պակաս բերք է ստացվում, քան իր ժամանակին կատարվածից: Վերոհիշյալ աղյուսակից յերևում է նաև այն, վոր ուշահաս սորտերն ուշ ցանքի դեպքում, համեմատած վաղահասների հետ, ավելի պակաս բերք են տալիս:

Նկատի ունենալով վերոհիշյալները, բամբակի ցանքը պիտի կատարել վոչ շատ շուտ և վոչ ել ուշ, այլ բնորել ցանքի համար

այն ժամանակը, վերի դեպքում հողային և կլիմայական պայմանները հնարավորություն կտան բամբակենու նորմալ զարգացմանը: Բազմապա փորձերը ցույց են տվել, վոր Խ. Հայաստանի պայմաններում ցանքը պիտի սկսել ապրիլի 20-ից և վերջացնել մայիսի 5-ից մինչև 10-ը: Ի հարկե ե, այս թվերը բոլոր տարիների համար անփոփոխ լինել չեն կարող, այլ կարող են լինել տարիներ, յերբ ցանքը հնարավոր կլինի կատարել ավելի շուտ կամ հակառակը:

Ցանքն առաջին հերթին պիտի կատարել թեթև և արագ տաքացող հողերում, իսկ վերջին հերթին—ծանր, ուշ տաքացող հողերում:

ՑԱՆՔԻ ԽՈՐՈԹՅՈՒՆԸ

Բամբակենու սերմերի կանոնավոր և միահավասար ծլելու խնդրում մեծ նշանակություն ունի ցանքի խորությունը: Շատ խորը կատարված ցանքից ստացվում են նոսր, նվազ ու զեղնած բույսեր: Սա հետևանք ե նրան, վոր խոր ցանված սերմերի ծիլերը չեն կարողանում հաղթահարել հողի հաստ շերտը և դուրս գալ, վորի շնորհիվ, յերկար ժամանակ մնալով հողի մեջ, մեծ մասը փչանում ե, իսկ դուրս յեկածներն ել, ինչպես ասինք, շատ աննորմալ են լինում: Ցանքի նորմալ խորությունը կարելի յե համարել 3—6 սանտիմետրի սահմանները, սակայն ցանքի խորությունը մեծ չափով կախված ե հողային և կլիմայական պայմաններից: Այսպես, որինակ, արաթ արված հողերում պետք ե ցանել ավելի խորը, քան «սապուվար»-ի դեպքում, ինչպես նաև ծանր հողերում ավելի յերես պետք ե ցանել, քան թեթև հողերում:

Արաթի դեպքում խորությունը պետք ե լինի 4—5 սմ., իսկ «սապուվար»-ի դեպքում՝ 3—4 սանտիմետր:

ՑԱՆՔ

Ցանքը պիտի կատարել շարքացան մեքենաներով, վորոնք մի շարք առավելություններ ունեն համեմատած շաղացանի հետ: Այժմ, շնորհիվ ՄՏԿ-ների և կոլանտիստությունների ունեցած լայն հնարավորություններին, մեր բամբակացան շրջանները լիովին կիրառում են շարքացան մեքենաները:

Շարքացանի միջոցով սերմերը ցանվում են հավասարաչափ

խորություն և հեռավորության վրա, սերմերը հողով կանոնավոր ծածկվում են և շարքերն ստացվում են ուղիղ: Շարքացանը մեծ չափով նպաստում ե հետագա աշխատանքների մեխանիզացիային, ինչպես են՝ կուլտիվացիան, ֆլասատունների դեմ պայքարը, բերքահավաքը և այլն: Բացի այդ, նման ցանքերում բամբակի բույսերն իրարից հավասարաչափ հեռավորության վրա գտնվելով՝ կանոնավոր և հավասար ոգտվում են լույսից, հողի սննդանյութերից և ջրից: Շարքացանի միջոցով ավելի քիչ սերմացու յե ծախսվում, քան շաղացանի դեպքում: Շարքացանով մեկ հեկտարին պիտի ցանել 55 կիլոգրամ սերմ:

Ցանքի համար գաշտերը պետք ե փոցխվան, հարթված և մոխրոտներից ազատված լինեն: Մարդերով ցանքի դեպքում, պետք ե թմբերը քաշված լինեն ուղիղ և մեկը մյուսից հավասար հեռավորության վրա: Մարդոս պիտի կատարել լարով և հետո մարդերի մեջը հարթել: Այս աշխատանքներին պետք ե անմիջապես հաջորդի ցանքը: Նախապատրաստական աշխատանքների և ցանքի մեջ ընկած ժամանակամիջոցը պետք ե շատ կարճ լինի, մանավանդ արաթ արված հողերում՝ կրկնավարից և փոցխից անմիջապես հետո պիտի ցանքը կատարել, այլպես հողի վերին շերտը կչորանա և սերմերն ընկնելով չոր հողի մեջ, չեն ծլի:

Ցանքից առաջ անհրաժեշտ ե շարքացաններն ստուգել և կարգավորել, վորպեսզի սերմերը թափվեն հողի մեջ կանոնավոր և հավասարաչափ: Ցանքը պիտի կատարել ուղիղ շարքերով, վորն անհրաժեշտ պայման ե հետագա աշխատանքների համար: Անհրաժեշտ ե մեծ ուշադրություն դարձնել շարքերի հեռավորության վրա միմյանցից, վորից մեծ չափով կախված ե բերքի քանակը:

Ինչպես շատ նոսր, այնպես ել շատ խիտ ցանքի դեպքում բարձր բերք ստանալ հնարավոր չե, վորովհետև առաջին դեպքում մեկ հեկտարի վրա բույսերի քանակը շատ քիչ կլինի և դրա համար բերքի ընդհանուր քանակն ել պակաս կլինի, իսկ յերկրորդ, այսինքն խիտ ցանքի դեպքում բույսերը մեկը մյուսին խանգարելու հետևանքով, ավելի մանր կմնան, կնգուղները փոքր կլինեն, ինչպես նաև հետագայում քաղհանը, կուլտիվացիան և այլ աշխատանքները հնարավոր չի լինի մեխանիզացիայի յենթարկելը: Այս ուղղությամբ Գանձակի փորձադաշտում կատարված փորձերը հետևյալ պատկերն են տալիս՝

3808-12
190681



Հեռավորությունը շարքը շարքից սահման- մետրներով	Հեռավորությունը բույսը բույսից սահմանմետրներով	Բերքը մեկ հեկտա- րից ցենտն.
143	45	9,5
113	35	13,9
98	30	14,5
83	25	15,9
68	20	16

Ինչպես թվերից տեսնում ենք, շատ ավելի ձեռնառու յե հա-
մեմատաբար խիտ ցանքը, քան թե նոսրը: Յանքի խտություն
վորոշելը մեծ կապ ունի ցանվող բամբակենու սորտի և հողային
պայմանների հետ: Պարարտ, ուժեղ հողերում պետք է տարածու-
թյուններն ավելի լայն վերցնել, իսկ թույլ աղքատ հողերում՝
համեմատաբար ավելի պակաս վերցնել: Մեր պայմաններում
միջշարքային տարածությունները պիտի թողնել 60—70 սմ.:
Յանքը արակտորով կատարելու և բերքը մեքենաներով հավա-
քելու դեպքում, միջշարքային տարածությունները պետք է հար-
մարեցնել մեքենաների պահանջներին: Յանքից հետո ասպսու-
վար կատարված հողերում քեշի ժամանակ անհրաժեշտ է արտը
փոցել կամ տափանել, վորպեսզի ջրելուց հետո առաջացած
կեղևը փշրվի, վորով և կհեշտանա ծիլերի դուրս գալը: Խոշ մի-
ջոցով վոչնչացվում են նաև նոր ծլած մուլխոտերը: Արաթ ար-
ված հողերում այս աշխատանքը պիտի կատարել ուժեղ անձրևներ
գալու դեպքում, յերբ դրա հետևանքով հողը կեղևակալում է:

Ն Ո Ս Ր Ա Ց Ո Ւ Մ

Բամբակենու նոսրացման աշխատանքների վրա մեզ մոտ
հարկ յեղած ուշադրությունը չի դարձվում, այնինչ այդ աշխա-
տանքը չափազանց անհրաժեշտ է բամբակենու կանոնավոր դար-
ացման համար:

Վորպեսզի բամբակենու բույսերը հավասարաչափ դարգանան

և մեկը մյուսին չխանգարեն, պետք է նրանց տրամադրել հավա-
սար և անհրաժեշտ չափով տարածություն, վորը կատարվում է
նոսրացման միջոցով:

Նոսրացման աշխատանքները պիտի կատարել իր ժամանա-
կին: Ժամանակից շուտ կամ ուշ կատարված նոսրացումը տալիս
է բացասական հետևանք:

Առաջին նոսրացումը պիտի կատարել, յերբ բամբակենու
վրա դարգացել են 2—3 իսկական տերևներ: Այս աշխատանքը
յերբեք չի կարելի ուշացնել, հակառակ դեպքում՝ խտություն պատ-
ճառով բամբակի բույսերը միմյանց կը խանգարեն, լույսի պա-
կաս կզգան, վորի հետևանքով ուժեղ կերկարեն, կը մնան նվազ
և կը ճյուղավորվին շատ թույլ և քիչ: Այս բոլորի հետևանքը
կը լինի այն, վոր նման դաշտերից շատ քիչ բերք կստացվի:
Յերկրորդ նոսրացումը պիտի կատարել առաջինից մոտավորապես
12—15 օր հետո, յերբ բամբակենին ունենում է 4—5 տերև:

Առաջին նոսրացման ժամանակ ամեն մի բնում պետք է
թողնել 2 բույս և բունը բնից 10—12 սմ: հեռավորության վրա:
Իսկ յերկրորդ նոսրացման դեպքում ամեն մի բնում վերջնակա-
նապես պիտի թողնել դարձյալ յերկու բույս և բների մեջ 20—25
սմ. հեռավորություն: Միայն շատ ուժեղ հողերում բների հեռա-
վորությունը կարելի յե թողնել 30 սմ.: Նոսրացման ժամանակ
պետք է հեռացնել վատ դարգացած, նվազ բույսերը, իսկ առողջ-
ները թողնել: Նոսրացումը պետք է շատ խնամքով կատարել,
անպայման պահպանելով բների նորմալ հեռավորությունը և
բներում չթողնել նշվածից շատ բույսեր: Հեռացվող բույսերը
պետք է հանել արմատներով:

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԴԱՇՏԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԽՆԱՄԲԸ

Բամբակենու կանոնավոր դարգացման համար անհրաժեշտ
է, վոր արտը լինի փուխր և մուլխոտերից մաքրված: Այս աշ-
խատանքները կատարվում են քաղհանի և կուլախիվացիայի մի-
ջոցով: Հողի յերեսը փխրեցնելով հնարավոր է լինում խանգարել
ջրի արագ դուրսդրմանը, նպաստել ոգի մուտքը հողի մեջ և
ստեղծել բամբակենու անդառություն համար բարենպաստ պայ-
մաններ:

Մեծ ուշադրություն պիտի դարձնել նաև մուլխոտերից ա-

դատվելու աշխատանքների վրա: Մոլախոտերը, ինչպես բոլոր կուլտուրական բույսերի, այնպես էլ բամբակի դաշտերի համար շատ մեծ չարիք են: Նրանք զցուծ են բամբակի բերքի թե քանակը և թե վորակը, մեծ չափով նպաստում են վնասատուների տարածմանը, ինչպես նաև դժվարացնում են մշակման և բերքահավաքի աշխատանքները: Մեր բամբակացան շրջաններում շատ տարածված են՝ դանդուղանը, պատաստուկը, չայիրը, թելուկը, ամալանտուսը, կալուկը և բազմաթիվ այլ մոլախոտեր: Այս մոլախոտերը վնչնչացնելու և դաշտերն այդ չարիքից ազատելու համար անհրաժեշտ են համառ և սխտեմատիկ աշխատանքներ, վորոնց շարքում նշանակալից տեղ են գրավում նաև քաղհանը և կուլտիվացիան: Բամբակենու առաջին նոսրացումից անմիջապես առաջ պիտի կատարել առաջին քաղհանը և կուլտիվացիան, վորոնց միջոցով վնչնչացվում են դաշտում գտնվող մոլախոտերը և հողի յերեսը փրկեցվում է:

Բացի միջաբաժան տարածությունները փրկեցնելուց և մոլախոտերը քաղհանելուց, անհրաժեշտ է նույն աշխատանքները կատարել նաև շարքերի վրա, վորտեղ հաճախ աճադին քանակությամբ մոլախոտեր են զարգանում: Մովորարար շարքերի վրա այդ աշխատանքը պիտի կատարել կուլտիվացիայից անմիջապես հետո, սակայն այն դաշտերը, վորոնք ուժեղ վարակված են պատաստուկով, նախ պիտի շարքերի վրա կատարել ձեռքի քաղհանը և հետո կատարել միջաբաժան տարածությունների կուլտիվացիան:

Մոլախոտերի դեմ պայքարն անպայման պիտի կատարել առանց ուշացումների, այլապես բամբակի նորածիլ բույսերը կարող են խիստ տուժել: Մովորարար առաջին քաղհանը կատարվում է ցանքից մոտ 25 օր հետո, սակայն յեթե դաշտերը մոլախոտերով շատ են վարակված, ապա այդ աշխատանքը պիտի կատարել ավելի շուտ:

Պիտի նկատի ունենալ, վոր վորքան ցանքի նախապատրաստական աշխատանքները լավ կատարված լինեն, հողը խնամքով մշակվի և այլն, այնքան հետագայում քաղհանի աշխատանքները կը հեղտանան:

Առաջին կուլտիվացիան պետք է կատարել զգուշ և կուլտիվատորի լայնությունը վերցնել այնքան, վոր այն չվնասի նորածիլ բամբակենիներին:

Քաղհանի և կուլտիվացիայի թիվը կապ ունի հողային պայմանների և դաշտի մոլախոտերով վարակվածության հետ: Քաղհան պիտի կատարել 4—5 անգամ, նայած դաշտի վարակվածության, և մոտ նույնքան էլ կուլտիվացիա: Այս աշխատանքները կատարվում են գլխավորապես մինչև բամբակենու զարգացման այն աստիճանը, յերբ նրանք արդեն ծածկում են միջաբաժան տարածությունները:

Յերկրորդ քաղհանը և կուլտիվացիան պիտի կատարել առաջին ջրից (չնաշված ձլաջուրը) մի քանի օր հետո, յերբ հողի քեշն յեկել է, վորը մոտավորապես տեղի յե ունենում 4—5 օր հետո: Յերկրորդ և չորրորդ քաղհաններն ու կուլտիվացիաները կատարվում են համապատասխան ջրերից հետո, նույն ձևով: Ամեն մի քաղհանից և կուլտիվացիայից մինչև մյուսի միջև ընկած ժամանակաթիջոցը տեղում է մոտ 18—25 օր:

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԴԱՇՏԵՐԻ ՎՈՌՈԳՈՒՄԸ

Մեր բամբակացան շրջաններում տարեկան տեղումների քանակը հասնում է մոտ 250 մ.մ.: Խոնավության այս քանակը շատ քիչ է բամբակենու պահանջները բավարարելու համար՝ բացի այս, տեղումների զգալի մասը գալիս են աշնան և ձմռան ամիսներին, վորոնց մեծ մասը հետագայում հողի մակերեսից գոլորշիանում է: Այս իսկ տեսակետից Խ. Հայաստանի պայմաններում բամբակենին մշակվում է միայն ջրովի հողերում և ջուրն, ինչպես նաև ջրելու ձևերը, քանակը և այլն շատ մեծ դեր են խաղում բամբակի բերքատվության բարձրացման գործում: Անժամանակ և անշնորք կատարված վոտոգումը տալիս է մի շարք բացասական հետևանքներ, վորից բամբակենին խիստ տուժում է:

Բամբակենուն ջուր անհրաժեշտ է սկսած նրա զարգացման ամենասկզբնական շրջանից, սակայն ջրի պահանջը տարբեր է նրա զարգացման տարբեր շրջաններում: Այս տեսակետից բամբակենու կյանքը կարելի է բաժանել հետևյալ յերեք շրջանների՝ 1) ցանքից մինչև ծաղկելը, 2) ծաղկման շրջան և 3) հասունացման շրջան: Առաջին շրջանում, վորը նորմալ ցանքի դեպքում տեղում է ապրիլի կեսից մինչև հուլիսի կեսերը (60—65 օր), բամբակենին համեմատաբար ավելի քիչ ջուր է պահանջում, քան յերկրորդ շրջանում:

Առաջին շրջանում առատ ջուր տալու դեպքում՝ բամբակենու արմատային սխտեմը թուլյ է զարգանում, ուժեղ զարգանում են կանաչ մասերը, ուշանում է պտյառու ճյուղերի զարգացումը, վորոնց հետևանքով նման բույսերի զարգացման հետագա շրջանները (ծաղկում, հասունացում) շատ ուշանում են և վերջին հաջով մինչև ցրտերի գալը կնգուզների քիչ մասն է բացվում ու բերքն ստացվում է շատ քիչ։ Բացի այդ, առաջին շրջանում շատ առատ ջրով բամբակենիներն արմատային սխտեմը թուլյ զարգանալու հետևանքով, այդ բույսերը հողի խոր շերտերի խոնավությունը լավ չեն կարողանում ոգտագործել և զարգացման հետագա շրջանում ջրելու կարիքն աճելի հաճախ է զգացվում, ինչպիսին, յերևելով նաև ջրի սուղ պայմաններից, միանգամայն անցանկալի յե։ Սակայն, ինչպես շատ առատ ջուրը, այնպես էլ անհրաժեշտ քանակից քիչ ջուրը ևս ունեն իրենց խիստ բացասական կողմերը. այդ խիստ տեսակետից պիտի աշխատել բամբակենու զարգացման՝ ինչպես առաջին շրջանում, այնպես էլ վերջին շրջաններում տալ չափավոր խոնավություն, վորի դեպքում բամբակենու թե արմատային սխտեմը և թե վերերկրյա մասերը, մյուս անհրաժեշտ գործոնների պայմաններում, կզարգանան ցանկալի ուղղությամբ։

Փորձերը ցույց են տալիս, վոր մեր բամբակացան շրջաններում, յերևելով հողային և կլիմայական պայմաններից, ինչպես նաև մշակվող սորտի պահանջներից, բամբակենուն մինչև ծաղկելը պետք է տալ 1 կամ 2 ջուր (բացի ծաղկից)։ Նկատի ունենալով բամբակենու զարգացման սկզբնական շրջաններում հողի համեմատաբար խոնավ լինելը և արմատային սխտեմի հողի մեջ խոր զարգանալու համար պայմաններ ստեղծելու խնդիրը, առաջին ջուրը պետք է տալ համեմատաբար ուշ։ Այդ ջուրը, նայած ցանքի ժամանակին և հողային ու կլիմայական պայմաններին, տրվում է մոտավորապես հունիսի սկզբներից մինչև նույն ամսի վերջը։ Մոտավորաբար բամբակենու արտաքինից նկատվում է նրա ջրի պահանջ ունենալը։ Ծարավ բամբակենու տերևներն առավտվանից զակացած են լինում, տերևների գույնը դառնում է մուգ կանաչ կամ կապույտ։ Զրեւոց հետո վերականգնվում է բամբակենու առողջ տեսքը։ Մինչև ծաղկման շրջանը յերկրորդ ջուրը պիտի տալ, յերբ բամբակենին դրա կարիքն է զգում։ Դա

մոտավորապես ընկնում է առաջին ջրից 15—20 որ հետո, հունիսի վերջերից մինչև հուլիսի կեսերը։

Բամբակենու ծաղկման շրջանն ընկնում է հուլիս—օգոստոս ամիսներին, վորոնք բամբակագործական շրջանների ամենաշոգ և չոր յեղանակներով ամիսներն են։ Հիշյալ շրջանում բամբակենին աճելի մեծ քանակությամբ ջուր է ծախսում։ Նա այդ ժամանակ լրիվ կազմակերպված է և անց է կացնում իր զարգացման ամենակարևոր շրջաններից մեկը, այն է՝ ծաղկման և կնգուզների կազմակերպման, ինչպես նաև նոր կոկոնների առաջացման շրջանը։ Նկատի ունենալով վերոհիշյալը, պարզ է, վոր բամբակի դաշտերը ջրելու կարիքն այս շրջանում աճելի մեծ պիտի լինի, քան նախորդ շրջանում։ Այն շրջանում բամբակենուն անհրաժեշտ քանակի ջրով չապահովելն, ինչպես նաև անժամանակ և անխնամ ջրելը ուժեղ չափով կանգրագառնա ծաղկման նորմալ ընթացքի վրա, նաև խիստ կնպաստի ծաղկութափմանը։ Այս շրջանում պետք է ջրել 3 անգամ։ Զուրը տրվելու յե մոտավորապես 15—20 որը մեկ անգամ։ Ծաղկման շրջանի առաջին ջուրը, այսինքն ըստ հերթականության 3-րդ ջուրը, պիտի տալ 2-րդից մոտ 15—20 որ հետո։ 3-րդ, ինչպես նաև առաջին և յերկրորդ ջրերից մի քանի որ հետո, յերբ հողի քեշը զալիս է, պետք է կատարել կուլտիվացիա և քաղհան։

Բամբակենու զարգացման յերրորդ և վերջին շրջանում՝ նայած կլիմայական և հողային պայմաններին, կարելի յե տալ մեկ ջուր կամ բոլորովին չտալ։ Այս շրջանում առատ ջուրը ձրգաձգում է բամբակի հասունացումը, վորի հետևանքով մինչև ցրտերի գալը շատ քիչ բերք է հավաքվում։

Այսպիսով, Ս. Հայաստանի պայմաններում, բամբակի դաշտերը պիտի ջրել 4—6 անգամ, վորոնցից մեկը կամ յեղևուտը տրվում է մինչև ծաղկման շրջանը, յերեքը—ծաղկման շրջանում և մեկը (անհրաժեշտության դեպքում)—հասունացման շրջանում։ Ի հարկե, սխալ կլինի ջրելու այս թվերն անխտիր բոլոր պայմաններում անփոփոխ կիրառելը։ Ինչպես ասել ենք, ջրելու թիվը և ժամանակը պայմանավորվում է, ինչպես բամբակենու զարգացման շրջանների պահանջներով, այնպես էլ հողային և կլիմայական պայմաններով։ Այն հողերը, վորոնց ստորերկրյա ջրերը շատ մոտ են, ջրելու կարիք շատ քիչ են զգում և ընդհանրապես

ավազային հողերն անհրաժեշտ ե լինում հաճախակի ջրել: Սա-
կայն նման պայմաններ համեմատաբար քիչ են և մեր բամբա-
կացան շրջանների հողերից դերակշռող մասն համար պետք ե
կիրառել վերևում նշված ջրի սքեմաները:

Ջրելու ձևերը: Բամբակի դաշտերը ջրվում են մի քանի
ձևերով, վերոնցից մեզ մոտ ամենից շատ տարածված ե մարգերի
միջոցով վոռոգումը: Բացի այս ձևից, մեր բամբակացան շրջան-
ներում դեռևս շատ քիչ չափերով գործադրվում ե ջրելու ակոսա-
յին ձևը:

Վոռոգելու այս յերկու ձևերը հիմնականում իրարից տար-
բերվում են նրանով, վոր մարգերով վոռոգելու դեպքում ջուրը
բաց ե թողնվում մարգերի վրա, իսկ յերկրորդ դեպքում ջուրը
հոսում ե ակոսներով և այնտեղից մազանոթների միջոցով բարձ-
րանում ե թմբերի վրա:

Մարգերի միջոցով ջրելն ունի մի շարք բացասական կող-
մեր: Այս ձևով ջրելուց հողն ուժեղ կեղևակալում ե, վորը հետա-
զայում նպաստում ե ջրի արագ գոլորշիացման, դաշտը հավասա-
բաչափ չի ջրվում, բարձր մնացած տեղերը քիչ, իսկ փոս բնկած
մասերը շատ են խոնավանում. շատ աշխատանք ե ծախսվում
հողը մարգոսելու և հետազայում այս ձևով ջրելուց հետո՝ հողի
յերեսին առաջացած կեղևը փշրելու համար և այլն. սակայն նա
ուսնի նաև վորոշ դրական կողմեր, այն ե՝ նախ դաշտերը ջրվում
են արագ և յերկրորդ, այս ձևով ջրելիս աղակալած հողերը լվաց-
վում ու աղատվում են հողի վերին շերտում կուտակված ալկերոդ
և ֆլասակար աղերից:

Ակոսների միջոցով ջրելու ձևն ավելի կատարելագործված
յեղանակ ե և չունի առաջին ձևի բացասական կողմերը: Այս ձևով
վոռոգելիս պետք ե ամեն մի ջրից առաջ շարքերի մեջ կուլտի-
վատորի միջոցով քաղ անել ակոսներ և նրանց միջով բաց
թողնել ջուրը: Վորպեսզի ակոսները հաջող ստացվեն, անհրա-
ժեշտ ե կուլտիվատորի վերջին խոփիկները փոխել շուռ տվող
թևիկներով: Ջրելուց հետո հողի քեշի ժամանակ անպայման միջ-
շարքային տարածությունները պիտի փխրեցնել: Այս վերջին աշ-
խատանքը պետք ե կատարել մինչև բամբակենիների այնքան
ճյուղավորվելը, վոր նրանք ծածկեն միջշարքային տարածու-
թյունները: Վոռոգելու ժամանակ ջուրը չպետք ե շատ բաց թող-

նել, վոր ծածկի թմբերը, այլ պետք ե այն հաշվով տալ, վոր այն
հոսի դանդաղ և թույլ հոսանքով: Ակոսներով ջուրը հոսելու յե այն-
քան, մինչև վոր թմբերը խոնավությամբ հագնան և սեանան:

Վոռոգման այս ձևի շնորհիվ, ջուրը հավասարաչափ ե լավ
ներծծվում ե հողի մեջ: Հողն ուժեղ չի կեղևակալում և նվազում
ե հողի յերեսից ջրի գոլորշիացումը, խնայվում ե ջուրը, նպաս-
տում ե աշխատանքների մեխանիզացիային, վերացվում են մար-
գոսի աշխատանքները և այլն: Նկատի ունենալով այս բոլորը,
հնարավորության սահմաններում պետք ե անցնել ջրելու այս
ձևվին:

Ընդհանրապես ջրելու վերոհիշյալ յերկու ձևերի դեպքում ել պետք
ե ջուրը բաց թողնել դանդաղ հոսանքով, վորպեսզի հողի յերեսը
չը սվաղվի և արգելք չհանդիսանա ջրի ներս ծծվելուն, մա-
նավանդ ծանր, կավային հողերում ջրի հոսանքն անպայման
պետք ե թույլ լինի, վորովհետև նման հողերում ջուրը ներծծ-
վում ե շատ դանդաղ. իսկ թեթև, ավազային հողերում կարելի
յե համեմատաբար ավելի ուժեղ հոսանք տալ: Ջրի հոսանքը պետք
ե թույլ լինի նաև թեք հողերում, իսկ հարթ հողամասերում հա-
մեմատաբար ավելի ուժեղ:

Բամբակենու դաշտերի խնամքի շարքում շատ կարևոր տեղ
գրավում ե նաև ֆլասատուների և հիվանդությունների դեմ պայ-
քարը, վորոնք ամեն տարի հսկայական ֆլասներ են հասցնում:
Այս խնդրի մասին լույս ե տեսնելու առանձին գրքույկ:

ԲԱՄԲԱԿԻ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՐԸ

Բամբակենու կնգուղները բացվում են աստիճանաբար,
սկսած բույսի ցածրի ճյուղերից դեպի վերևը: Այս պատճառով
բամբակի բերքը հավաքվում ե մի քանի անգամ:

Բամբակի կնգուղների արտաքին ձևը նորմալ մեծության
հասնում ե ծաղկապսակի թափվելուց 20—25 որ հետո, այդ ժա-
մանակամիջոցում նորմալ մեծության հասնում են նաև թևերը և
սերմը: Սակայն այդ ժամանակամիջոցում դեռևս բամբակը հա-
սունացած չի լինում, այլ հասունացման համար պահանջվում ե
• ևս մոտ այնքան ժամանակ:

Մեր պայմաններում հասունացումն սկսվում ե մոտավորա-
պես սեպտեմբեր ամսից և տևում ե մինչև ցրտերը:

կնգուղիների մեծութիւնը, հասունացման սկիզբը, թիւի վորակը և այլն կապ ունեն մշակվող սորտի առանձնահատկութիւնների հետ, սակայն այդ խնդիրը մեծ չափով պայմանավորվում է նաև կերրաւոր ագրոձեռնարկումների կոմպլեքսով: Յեղնելով ավելի հողային և կլիմայական պայմանները, վորքան ճիշտ և ժամանակին կերրաւոր ագրոձեռնարկումները, այնքան այդ դաշտում մշակվող բամբակենու տված արդուները թե քանակով և թե վորակով բարձր կլինին: Նման դեպքում բամբակի բերքի մեծ տուկտը կհավաքվի մինչև ցրտերն սկսվելը, մի հանգամանք, վոր շատ կարևոր է բարձր վորակի և շատ բերք ստանալու խնդրում:

Բերքահավաքը պիտի սկսել կնգուղիների 40—50 տոկոսը բացվելուց հետո: Նախքան բերքահավաքն սկսելը, դաշտը պետք է մաքրել մոլախոտերից, հատկապես կաշուկից, վորը թե խանգարում է բերքահավաքը և թե խիստ դժուր է բերքի վորակը: Բերքահավաքը չպետք է ուղացնել, այլ պետք, հասած բամբակը դաշտում յերկար մնալով՝ անձրևներից, փոշուց և քամիներից կարող է փչանալ՝ ինչպես նաև կարող է թափվել և կեղտոտվել:

Բերքահավաքի ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ խնդիրները՝

1. Պետք է հավաքել միայն լավ բացված կնգուղիները.
2. Անթուլատրելի յե հավաքել կիսաբացված, չհասած կնգուղիները:
3. Բերքը չպետք է հավաքել անձրևային յեղանակներին:
4. Բերքահավաքը պետք է սկսել առավոտյան ցողը վերանալուց հետո.
5. Անհրաժեշտ է ուղադիր լինել, վորպեսզի չորացած տերևները չխառնվեն բերքի հետ.
6. Ձանաղան փրաստուներից, հիվանդութիւններից և այլ պատճառներից փրաւած բամբակը պիտի հավաքել առանձին.
7. Առանձին պիտի հավաքել ցրտահարութիւններից առաջ և հետո բացված բամբակը, ինչպես նաև հասած վիճակում հավաքված բամբակը վոչ մի դեպքում չի կարելի խառնել չհասունացած վիճակում հավաքված բամբակի հետ.
8. Խոնավ վիճակում հավաքված բամբակը յերբեք չի կարելի առանց չորացնելու լցնել բարդանների մեջ: Այդպիսի բամբակը

չորացնելու համար պետք է փոել բարակ շերտով բրեկենտներէ կամ այլ հարմարութիւնների վրա.


9. Բերքահավաքի և բերքի տեղափոխման ժամանակ գետնին թափված բամբակը պետք է հավաքել, և առանց մաքուր բամբակին խառնելու, հանձնել գնման կայան:

Բերքահավաքի ժամանակ անհրաժեշտ է այս խնդիրներէ վրա լուրջ ուղադրութիւն դարձնել, քանի վոր առանց այդ պայմանները կիրառելու՝ չի կարելի բարձր արդուներ ստանալ:

Այժմ, խորհրդային և կոլեկտիւ տնտեսութիւններում աստիճանաբար ծավալվում է մեքենաներով բերքահավաքը: Այս միջոցով կը խնայվեն մեծ քանակութիւն բանվորական ձեռքեր և կբարձրացվի աշխատանքի արտադրողականութիւնը: Համաձայն Հոգժողկոմատի կողմից մշակված ագրոկանոնների՝ մեքենաներով հավաքվող բամբակի դաշտը պետք է ունենա առնվազն 6 ցենտներ բերքատուլութիւն և համապատասխան միջարքային տարածութիւններ:

Բերքահավաքը պիտի սկսել, յերբ դաշտում բացված են կնգուղիների 60—70 տոկոսը: Մեքենայով հավաքված բամբակը չպետք է խառնել ձեռքով հավաքվածին:

Բամբակի բերքահավաքից հետո այդ հողամասից—նախքան աշնանավար, կատարելը, պետք է հավաքել նաև չբացված կնգուղիները: Հավաքված կնգուղիներն անհրաժեշտ է ցերեկները փոել արևի տակ և չորացնել, իսկ յերեկոները հավաքել մի տեղ, վորպեսզի չխոնավանան: Անձրևային օրերը պիտի փոել ծածկէ տակ: Չորացած կնգուղիներից պետք է հանել բամբակը, վորը դարձյալ լավ չորացնել և հանձնել գնման կայան:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ	59
Բամբակի դաշտերի ընտրությունը	3
Հողը նախապատրաստելը	4
Վարի խորությունը	4
Արաթ	7
Բամբակի ցանքաշրջանառությունը	7
Բամբակի դաշտերի պարարտացումը	9
Ցանք և խնամք	12
Ցանքի ժամանակը	13
Ցանքի խորությունը	15
Ցանք	16
Նոսրացում	16
Բամբակենու դաշտերի հետագա խնամքը	18
Բամբակենու դաշտերի վռոտումը	19
Բամբակի հասունացումը և բերքահավաքը	21
	25

ՀՀ Ազգային գրադարան



NL0280466

Պատ. խմբագիր՝ Պ. Բալամբարյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Հակոբյան

Սրբագրիչ՝ Խ. Այվազյան

Հանձնվել է արտադրության 1934 թ. մարտի 17-ին, ստորագրված է տպագրիչ-
լու 1934 թ. մարտի 23-ին: Դրավիտ № 229: Պատվեր № 223: Տիրաժ 2000

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂԸՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, 50

18394

ԳԻՆԸ 35 Կ.

18394
8V



С. КАРАГЕЗЯН

Обработка хлопка

Сельхозгиз

1934

Эривань